

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի
ընդլայնված նիստի

02-ը հուլիսի 2018թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների
դասախոսներ և աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական տարվա ամփոփում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

2. Այլ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ,
գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո
նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ գիտխորհրդի
նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2017-18 ուստարվա II
կիսամյակի քննաշրջանի արդյունքները, քննաշրջանը անցել է համաձայն
ժամանակացույցի: Առաջադիմությունը համեմատած I կիսամյակի հետ
բարձրացել է: Բարձր է նաև համեմատած նախորդ տարվա հետ:
Առաջադիմության բարձրացմանը նպաստել է լրացուցիչ պարապմունքները և
լրացուցիչ խորհրդատվությունները /առաջադիմությունը կցվում է
արձանագրության տեքստին/: Նա միաժամանակ լուծարքային շրջանի
վերաբերյալ հանդես եկավ հանձնարարականներով:

Այնուհետև զեկուցողը՝ գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը,
ներկայացրեց ուսումնական տարվա կրթական գործունեության
ինքնավերլուծությունը: Նա մանրամասնեց ուսումնական գործընթացի

պահանջների հիման վրա կատարված աշխատանքները, որը ըստ ուսումնական տարվա հաստատված ժամանակացույցի իրականացվել են բոլոր պահանջները. դասաժամերի բացթողում չի գրանցվել, պատշաճ ձևով կազմակերպվել և անց են կացվել ընթացիկ քննությունների, ստուգումների և կիսամյակային քննաշրջանը: Իր գոհունակությունը հայտնեց ավարտական կուրսերի հետ իրականացված ավարտական աշխատանքների պաշտպանության մասին: Ֆակուլտետի ուսումնական գործընթացի մասին բազմիցս քննարկվել են նախորդ նիստերում: Աշխատանքների կատարումը և վերահսկողությունը իրականացվել է ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների համատեղ աշխատանքի շնորհիվ:

Ամփոփելով միտքը զեկուցողը իր գոհունակությունը հայտնեց նաև ֆակուլտետի դասախոսների և աշխատակիցների անթերի աշխատանքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ. Վ. Օթարյանը, Ա. Ս. Սիմոնյանը և ուրիշներ: Նրանք ևս ներկայացրին, որ ուսումնական տարին անցել է կազմակերպված՝ համապատասխան ուսումնական գործընթացի պահանջների:

Վերջում ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը շնորհակալություն հայտնեց դեկանատից և ամբիոններից բարեխիղճ աշխատանքի համար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, ներֆակուլտետային գործընթացի մասին: Կազմվել է ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերը, ամբիոններում առկա են դասախոսների ըստ առարկաների աշխատանքային փաթեթները, ներկայացվել են մասնագիտական ամբիոնների անհատական պլանները, նշելով, որ դասախոսական կազմը ըստ առարկաների ապահովված է: Կազմվում է նաև 2018-19 ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ